

ներով: Միշտ ալ չուաններով կապուածները չեղան միայն վաւերական խենթերը: Յաճախակի, գոնէ որոշ շրջաններու, մենք՝ առողջներս, նման ենք միւսներուն, որոնք պարպուած՝ իրենց ուղեղէն, պիտի շարունակեն ապրիլ մեր տուներուն մէջ, մեզի համար պա՛րզ՝ իրենց խօթութեան կշիռէն, բայց պատրելով աշխարհը:

Սանասարեանի հաւանական խայծէն ինքզինքը ազատող Մաթիկ Մելիքիսանեանցը մինչեւ Կարին վարժուելէ յետոյ ճանապարհային պայմաններուն, քիչ ու չատ՝ երկրին լեզուին, պիտի լայնօրէն նուիրուէր իր սկզբնական մտապատկերին, - մեր ժողովուրդին լրիւ ճանաչումին, որուն մէկ պատուական, հարազատ հատուածը կը մնար հաստատուած Բարձր Հայքի բարձրաւանդակին զանազան խորշերուն, իրաւ է թէ հետզհետէ ընկճուած թուրք տարրին բնաջնջող ուժերէն: Կարինը, Սանասարեանով, այս ոգիին կապուած գաղափարաբուլթեամբ, յեղափոխութեան վերանորոգիչ շունչին տակ Հայաստանի ապագայ տնտեսութեան մեծ կեդրո՛նը՝ որ իր լեռնային նկարագիրը հարկադրէր մեզի, մեզ ընելով Արեւելքի Շվեյցարիան: Որքան գեղեցիկ են մեր միտքին աղացած բաները, պայմանով, որ չթափին գետին: Հոն պիտի ուսումնասիրէր առողջ ու քիչ վտանգաւոր այն մեթոտները, որոնցմով զինուած, մեր ժողովուրդը պիտի իջնէր կռիւի կրկէսը, իսկապէս համագգային պատրաստութենէ մը ետք, վնասի ամէնէն նուազ հաւանականութեամբ: Տնտեսական ամուր ու քողարկուած զարգացո՛ւմ: Հոգեկան ու յեղափոխական նոյնքան ամրալոյ ու զուսպ տիցիալինա: Բոլոր ժողովուրդը պատրաստ մէ՛կ ձայնի, մէ՛կ ըրպէի: Ու այդ ըրպէ՛ն, մա՛նաւանդ: Ամէնէն յարմա՛րը, երբ պետութիւններու մրցակցութիւնը պիտի ստեղծէր մէկը միջազգային մեծ այն կնճիռներէն, որոնցմէ այնքան առատ ունի Արեւելքը, մասնաւորի՝ անոր Մերձաւորը: Համաշխարհիկ յեղափոխութի՛ւնը, ընկերվարական մեծ բանակներու գրոհով...